ԼԻԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Լեզվաբանական աշխատություններում շատ է գրվել ու գրվում հայ - ուրարտական լեզվական փոխառությունների մասին ընդհանրապես և հայերենում ուրարտական ենթաշերտի մասին մասնավորապես: Ասորեստանյան սեպագիր աղբյուրները վկայում են, որ Ք.ա. 13-9- րդ դարերում ուրարտացիները Հայկական լեռնաշխարհի խորքերն են աստիճանաբար ներթափանցել հարավից (Տիգրիսի և Մեծ Զաբի վերին հոսանքներից)՝ բնիկների կատաղի դիմադրության պայմաններում: Հայտնի է, որ Ուրարտուն (Բիայնիլի) հինարևելյան պետությունների նման տարբեր ցեղերի և էթնիկ խմբերի խառը կազմ ունեցող պետություն էր, որի մեջ բուն ուրարտացիները փոքրամասնություն էին կազմում, իսկ գերակշռող մեծամասնությունը բնիկներն էին:[1]

Ուրարտուն գոյություն է ունեցել Հայկական լեռնաշխարհում և, ինչ խոսք, սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի պատմության հետ: Ուրարտուի պատմությունը Հայկական լեռնաշխարհի՝ Հայաստանի պատմության բաղկացուցիչ մասն է և կազմում է նրա որոշակի դարաշրջանը: Բնական է, որ ուրարտացիների դարավոր համակեցությունը հայերի հետ պետք է հիմք տար լեզվական փոխազդեցությունների: Հետագայում ուրարտացիների՝ պատմական ասպարեզից վերանալը ենթադրել է տալիս, որ նրանք հիմնականում ձուլվել են բնիկներին՝ հայերին: Ուրեմն՝ հայերենը այս կամ այն չափով ներառել է նաև նրանց լեզուն: Դա էլ իր հերթին առաջացրել է ուրարտական ենթաշերտ հայերենում:

Պետք է ասել, որ հայ – ուրարտական փոխառությունների ուսումնասիրման սկզբնական շրջանում խոսվում էր միայն միակողմանի՝ հայերենի վրա ուրարտերենի ազդեցության մասին: Հետագայում սկսել են (հատկապես Գ. Ջահուկյանը) ուշադրություն դարձնել հակառակ՝ հայերենից ուրարտերեն ազդեցությանը: Գ. Ջահուկյանը նույնիսկ գրում է, որ ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի բառապաշարը հիմնականում հայկական է, և քերականական առանձնահատկությունները

[1] Բ.Ն. Առաքելյան, «Ուրարտուն և հայ ժողովրդի կազմավորումը» Ուրարտու – Հայաստանը, էջ 39:

հնարավոր է բացատրել նախագրաբարյան շրջանի քերականական առանձնահատկություններով:[2]

Լեզվաբանական ենթաշերտի հարցին մենք անդրադարձել ենք մեր մեկ այլ հոդվածում և եկել այն եզրակացության, որ ենթաշերտ ասելով զգետք է միայն հասկանալ մեռած, պատմության թատերաբեմից վերացած ազգերի լեզվի ներդրումը մի այլ լեզվի մեջ: Լեզվաբանության տեսանկյունից արդեն չի կարևորվում տվյալ լեզվում այս կամ այն չափով հետք թողած լեզվի կրողների գոյության փաստը: Այսօր էլ էթնիկապես ոչ միասեռ բնակչությամբ վայրերում կարող ենք խոսել ենթաշերտի մասին, եթե այն հիմնվի մի ամբողջ շարք փաստերի վրա:[3] Հայտնի է նաև, որ որևէ լեզվում ենթաշերտի ձևավորմանը նախորդում է տևական երկլեզվության շրջան: Սիա թե ինչ է գրում այս մասին Վ. Ի. Աբաևը, «Ենթաշերտը կապված է երկլեզվության հետ: Քանի որ մի լեզվից մյուսին անցնելը բարդ և դժվար մի պրոցես է և ենթադրում է քիչ թե շատ շարունակվող եկլեզվության շրջան, որն էլ իր հերթին նախադրյալներ է ստեղծում բավականին հեռու գնացող խառնման և երկու լեզվական համակարգերի փոխներթափանցման համար: Այս է պատճառը, որ ենթաշերտի լեզվաբանական յուրահատկությունը կարելի է բացատրել երկլեզվության հիման վրա»:[4] Հարկ է նշել, որ լեզվի հատկապես հնչյունական մակարդակի փոփոխությունները դժվար կլիներ բացատրել՝ առանց երկլեզվության շրջանը հաշվի առնելու: Հայերենում ուրարտական ենթաշերտի, ապա և նրա ձևավորման ժամանակի մասին խոսելուց առաջ պետք է ասենք, որ Հայկական լեռնաշխարհ ուրարտացիների գալով, բնականաբար, պետք է տեղի ունենար ոչ միայն հայերի ու ուրարտացիների, այլև հայերենի և ուրարտերենի ավելի սերտ շփում: Եվ եթե սկզբնական շրջանում հնարավոր է, որ հայերը և ուրարտացիները միմյանց հետ զանգվածաբար չեն շփվել, որոշ ժամանակ անց, կողք կողքի ապրելով, լեզվական փոխադարձ շփումները պետք է ակտիվանային: Այսինքն՝ կամա թե ակամա, որոշ ժամանակ անց, հատկապես բնիկների համար, պիտի սկսվեր երկլեզվության շրջանը: Իսկ որ այն եղել է, հաստատվում է դեպքերի հետագա զարգացումով՝ հայոց լեզվի հաղթանակով ու լեռնաշխարհի ոչ հայալեզու բնակչության հայացման գործընթացով: Իսկա-

---

[2] Գ. Ջահուկյան «Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին», ՊԲ.Հ. 2000 թ. N 1, էջ 124 – 128:

[3] Լ. Հակոբյան, «Լեզվական ենթաշերտի ըմբռնումը ժամանակակից լեզվաբանության մեջ», Կանթեղ, 2004 թ., N 1, էջ 102 – 103:

[4] 4. В. И. Абаев, О языковом субстате, Доклады и сообщения Института языкознания, АН СССР, N 9.

պես, հայոց լեզվի նախապատմական շրջանի քննությունը լեզվաբաններին հանգեցրել է այն եզրակացության, որ լեզվի գրեթե բոլոր մակարդակների որոշ երևույթներ կարելի է բացատրել ուրարտական ենթաշերտով:

Ինչ վերաբերում է հայերենում ուրարտական ենթաշերտի ձևավորման ժամանակաշրջանին, ապա պետք է ասենք, որ այս հարցի լուծումը տալու համար մեզ նախևառաջ կարող են օգնել ինչպես ուրարտական, այնպես էլ ասորեստանյան արքաների թողած արձանագրությունները: Հատկապես դեպի այն վայրերը կատարած արշավանքների մասին, որտեղի բնակչությունը, ինչպես ենթադրվում է, հայալեզու է եղել:

Ըստ հետազոտողների, Ք. ա. II – I հազարամյակներում Հայկական լեռնաշխարհում հայալեզու բնիկների բնակության տարածքը հյուսիսում հասել է մինչև պատմական Կողքիս, Կղարջք և Զավախք, հյուսիս արևմուտքում՝ մինչև Սևանա լճի ավազանը, Գեղամա լեռները և Սյունիք, արևելքում՝ մինչև Ուրմիա լճին արևելքից հարող շրջանները, արևմուտքում՝ մինչև անդրեփրատյան տարածքները, իսկ հարավում՝ մինչև Տիգրիսի և Մեծ Զաբի վերին հոսանքները:[5]

Մյուս կողմից, ասորեստանյան սեպագիր աղբյուրների տվյալներից ելնելով ենթադրվում է, որ ուրարտացիները Ք.ա. 13-9-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի խորքերն են աստիճանաբար ներթափանցել աստիճանաբար հարավից (Տիգրիսի և Մեծ Զաբի վերին հոսանքներից)՝ բնիկների կատաղի դիմադրության պայմաններում: Ավելի ուշ, արդեն ուրարտական արքաների թողած սեպագիր արձանագրությունները վկայում են, թե կոնկրետ որ տարածքներն են շարունակել ակտիվ դիմադրություն ցուցաբերել, որի պատճառով ուրարտական արքաները շատ դեպքերում ստիպված են եղել անգամ միևնույն տարում կրկնակի, եռակի արշավանքներ ձեռնարկել նույն վայրը՝ բնիկներին հնազանդեցնելու համար: Դա լավագույնս երևում է հատկապես ուրարտական արքաներ Մենուայի և Արգիշտի I- ի արձանագրություններից:[6] Սակայն ինչպես նկատում է Գ. Խ. Սարգսյանը, եթե ուրարտական թագավորներին այսպես թե այնպես հաջողվեր խոչընդոտել լեռնաշխարհի բնիկների ընդարձակումը, ապա նրանց ուժերից վեր կլիներ կասեցնել հարևան ցեղերին հետևողականորեն փոխանցվող բնիկների լեզվի երթը:[7] Ուրարտական արքաների թողած արձանագրությունների վերծանության ընթերցումից պարզ է դառնում, որ ուրարտա-

---

[5] Ն. Հարությունյան «Հին հայկական տեղանունները ու ցեղանունները սեպագիր աղբյուրներում և նրանց պատմական արմատները», Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, 2001 թ., էջ 181:

[6] Н. Арутюнян "Корпус урартских клинообразных надписей" Ереван, 2001 г., (հատկապես Մենուայի և Արգիշտի I- ի արձանագրությունները)

[7] Գ. Խ. Սարգսյան «Ուրարտական տեսությունը և հայերը», Ուրարտու - Հայաստան, Երևան, 1988 թ., էջ 104:

կան լծի դեմ ժողովրդի պայքարը ուժեղանում է հատկապես Ք. ա. VIII դ-ի I կեսերից: Իսկ որ նշված ժամանակահատվածում Հայկական լեռնաշխարհի բնիկները հայեր են եղել, հաստատվում է լեզվական մի շարք փաստերով: Այս հարցում կարևորվում է հատկապես Ուրարտական պետության տեղանունների և դրանց հայկական համարժեքների համեմատությունը: Ն. Հարությունյանը գտնում է, որ ուրարտահայկական տեղանունների թեման արծածելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ բնիկների տեղանունների ուրարտական զուգահեռները սեպագիր արձանագրություններում հիշատակվում են նվաճողական արշավանքների նկարագրության մեջ: Ուստի ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե ուրարտական, այլ օտար տարածքների հետ, որոնք ասպատակությունների են ենթարկվել ու կողոպտվել կամ էլ նվաճվել են ուրարտացիների կողմից՝ մոտ երեքհարյուրամյա ռազմական արշավանքների ընթացքում: «Հետևաբար, երբ մասնագիտական գրականության մեջ սովորաբար այդ ամենը հապճեպ անվանում են Ուրարտուի տոպոնիմիկա և էթնոնիմիկա, ապա դա ամենևին էլ լիարժեք չի արտահայտում պատմական իրողությունը: Դրանք ավելի շուտ սեպագիր աղբյուրներում հիշատակված օտար տեղանուններ ու ցեղանուններ են՝ ուրարտացիների կողմից հարմարեցված իրենց սեպագրի կանոններին: Օրինակ՝ վաղ հայկական Աբեղեանքը ուրարտացիներն իրենց սեպագիր վանկագրերով արտահայտել են Ա - բի – լի - ա - նի, Զավախքը՝ Զա - բա - խա, Ծղուկը՝ Ծո – լու – կու, Ծոպքը՝ Ծու – պա - նի ձևերով և այլն»:[8] Սրանց կարող ենք հավելել նաև Հավնունիք (Abuni), Երևան(< h e. *prep – Er(e)buni), Վան (Biaina) տեղանունները, որոնց հայկական ծագման մասին է խոսում այն փաստը, որ ուրարտական շրջանում (Ք. ա. I հազարամյակում) հայերենում *bh* b *r > հայ < (վ, ու) օրենքը այլևս չէր գործում:[9] Եվ քանի որ ուրարտական պետությունը Ք. ա. IX դարի կեսերին ստեղծվել է Վանա լճի ավազանում, ու նրա արքաների նվաճողական արշավանքները հետագայում ընդհանուր առմամբ ուղղված են եղել Հայկական լեռնաշխարհի խորքերը և հարակից տարածքները, ապա ամենևին էլ պատահական չէ, որ ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված տեղանունների մեծ մասը հիմնականում վերաբերում են լեռնաշխարհի բնիկներին, որոնք հայեր են եղել:

Ինչպես արդեն նշեցինք, Ք. ա. VIII դ- ի I կեսերից է հատկապես, որ կրկին սկսում է մեծ ակտիվություն ցուցաբերել տերության տարածքի հայա-

---

[8] Ն.Հարությունյան «Ուրարտա - հայկական տեղանունների և ցեղանունների ընդհանրություններ և նրանց պատմական արմատները», Հրան Նամէ, 1993 թ., N 3, էջ 16:

[9] Մ. Աղաբեկյան «Հայերենում *bh,* b, *r > < (վ, ու) հնչյունափոխությունը և ժամանակագրությունը», Հայագիտության և զուգադրական լեզվաբանության հարցեր, Երևան, 2002 թ., Պրակ բ, էջ 98

լեզու բնակչությունը: Այսինքն՝ Ք. ա. VIII դ- ի I կեսերին նոր թափ են ստանում ուրարտահայկական բախումները, ինչն էլ անխուսափելիորեն պիտի բերեր լեզուների ավելի խորը շփման: Ավելի խորը, քանի որ շփումը չէր կարող սկսվել միայն VIII դարում: Դրանից առաջ էլ, հատկապես այն վայրերում, ուր ուրարտացիները հարավից գալով բնակություն են հաստատել (լեռնաշխարհի հարավի սահմանային շրջաններում), շփումը բնականաբար ավելի շուտ սկսված կլիներ: Բացի այդ, ուրարտական արքաներն իրենց տերության սահմաններում հաճախ էին կատարում բնակչության վերաբնակեցումներ մի վայրից մյուսը, ինչը, բնականաբար, առաջ կբերեր լեզուների շփում և դրան հետևող մի լեզվի հաղթանակ և մյուսի պարտություն: Այսպիսով, եթե տերության կազմավորման նախնական ժամանակաշրջանում հնարավոր էր, որ ուրարտների և հայերի շփումները մեծ չափով չլիներ, ապա որոշ ժամանակ անց կողք կողքի ապրող այլալեզու ցեղերը պետք է անպայման իրար հետ շփվեին: Իսկ եթե մի լեզվով, տվյալ դեպքում հայերենով խոսողները նաև մեծամասնություն էին կազմում, ապա բնական է, որ կամաց – կամաց լեռնաշխարհի ոչ հայ բնակչության՝ ուրարտների մեջ էլ պետք է տարածում գտներ հայերենը:

Եվ սեպագիր արձանագրությունները, և անտիկ շրջանի պատմիչները վկայում են, որ Ք. ա. VII դ - ի վերջերին և VI դ-ի սկզբներին Հայկական լեռնաշխարհի բնակչությունը հիմնականում հայալեզու էր: Այսինքն՝ կարող ենք ենթադրել, որ հայերենում ուրարտական ենթաշերտի ձևավորման գործընթացը սկսվել է Ք. ա. VII դ-ի III քառորդից առաջ: Կարելի է ասել, որ VIII դ-ի I կեսերից, այսինքն՝ հայ – ուրարտական հարաբերությունների ակտիվացման շրջանից մինչև VII դ - ի III քառորդն (լեռնաշխարհի բնակչության հայալեզու դառնալը) ընկած մոտավորապես հարյուրհիսուն տարին էլ հենց վերը նշված զանգվածային երկլեզվության շրջանն է եղել, ինչը անպայման պետք է նախորդեր հայերենում ուրարտական ենթաշերտի ձևավորմանը: Ճիշտ է ենթադրել, որ շփումը ամբողջ բարձրավանդակում, բնականաբար, նույն ձևով չի եղել: Այն հավանաբար ավելի տևական և բուռն է եղել Վանա լճի շրջանում, որը ուրարտական պետության կենտրոնն է եղել և որտեղ ապրել է ուրարտախոս բնակչության մեծ մասը:

Ամփոփելով՝ պետք է ասենք, որ հայերենում ուրարտական ենթաշերտի ձևավորման ժամանակի հարցը հետագա ուսումնասիրությունների արդյունքում կարող է նաև փոփոխվել: Սակայն ուրարտագիտության արդի վիճակից ելնելով՝ կարծում ենք՝ ճիշտ կլինի ենթադրել, որ ուրարտական ենթաշերտը հայերենում ձևավորվել է վերը նշված ժամանակահատվածում: